

# Լեզվաբանություն և բանասիրություն

Անուշ Մարտիրոսյան

*ԵՄՀ օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս,  
նույն ամբիոնի հայցորդ*

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԱԴԻԲԵԶԱՆԱԿԱՆ ՄԵՂԱԴԻՐԱՆՔՆԵՐՈՒՄ

Արցախյան (ղարաբաղյան) հակամարտությամբ պայմանավորված՝ վերջին տարիներին առավել ակինսայտ են դարձել ադրբեջանական կեղծումները՝ հայոց լեզվի, գրերի և պատմության հետ կապված: Հոդվածի շրջանակում ներկայացված է ադրբեջանական մամուլի ու կառավարության կողմից ներկայացված ոչ հավաստի և կեղծ տվյալների վերհանումը, մեկնաբանումը և դրանց բացատրությունն ու հերքումը հայոց լեզվի և գրերի առնչությամբ: Չնայած մի քանի պատմական ակնարկի՝ հոդվածը չունի որևէ քաղաքական ենթատեքստ և միտում չունի վարկաբեկելու որևէ ժողովրդի գիրը, լեզուն, մշակույթը կամ պատմությունը:

**Հիմնաբառեր.** լեզվի պատմական զարգացում, լեզվական շփում, հայոց լեզու, հայոց գրեր, ադրբեջանական կեղծումներ, եթովպական տառեր, թուրքերեն և հայերեն բառերի փոխառություններ, լատիներեն այբուբեն:

Արցախյան հիմնահարցին զուգահեռ հատկապես վերջին մի քանի տարիներին սրընթաց կերպով զարգացում է ապրում ադրբեջանցի պատմաբանների և լեզվաբանների կողմից հայոց պատմության և հայոց լեզվի կեղծումը: Արցախյան քառօրյա պատերազմից հետո /2016, ապրիլ/, համացանցում և բոլոր հնարավոր հարթակներում տեսնում ենք, թե ինչպես է ադրբեջանական կառավարության անմիջական հովանավորությամբ ապատեղեկատվություն տարածվում հայերի և հայոց լեզվի վերաբերյալ:

Օրինակ՝ վերոնշյալ հղումով<sup>1</sup> մենք կարող ենք տեսնել, թե ինչպես

<sup>1</sup> Տես տեսաֆիլմ՝ “Хроники переселения армян на Кавказ”  
<https://www.youtube.com/watch?v=qDAKgfsoOo> (մուտք՝ 18.07.2019):

Ադրբեջանի կառավարության անմիջական հովանավորությամբ ստեղծվել է մեկժամանոց ֆիլմ՝ հայերի եկվոր լինելու վերաբերյալ այս կամ այն հոդվածից, հիպոթեզից կամ հայտարարությունից վերցնելով իրենց նպատակահարմար տողերը՝ առանց դրանց վերջնական խորքային վերլուծության:

Հայոց լեզուն ևս անմասն չէ այս ամենից: Այդիսկ պատճառով սույն հոդվածում կխոսենք հայոց լեզվի, ինչպես նաև հայոց գրերի մասին, որոնք այդքան շահարկվում են ադրբեջանցիների կողմից իրենց հասարակության մեջ և միտում ունեն անգամ դուրս գալու հասարակության շրջաններից, որտեղ մենք խնդիր կունենանք հայոց լեզվի և գրերի կեղծ մեկնաբանման մասին արդեն Ադրբեջանի սահմաններից դուրս:

Առաջինը մենք կխոսենք լեզվի մասին, քանի որ այն՝ որպես իրողություն, շատ ավելի հին պատմություն ունի, քան հայոց գրերը, որոնք ստեղծվել են հինգերորդ դարում: Այստեղ հիմնական խնդիրը, որ մենք տեսնում ենք ադրբեջանական մեկնաբանություններում, վերաբերում են փոխառություններին: Նկատի ունենալով հայոց լեզվի մեջ թուրքերենից և հատկապես պարսկերենից վերցրած փոխառությունները՝ ադրբեջանցի լեզվաբաններն ու պատմաբանները փորձում են ցույց տալ, որ հայերը չունեն սեփական լեզու, և որ դա մի լեզու է, որի բառապաշարի մեծ մասը վերցված է թուրքերենից<sup>1</sup>, այնինչ ուսումնասիրելով հայերենի բառային ֆոնդը՝ մենք տեսնում ենք, որ շատ քիչ և ընդհանրական բառեր են փոխառվել թուրքերենից, այն էլ հիմնականում խոսակցական լեզվում, իսկ ապա դադարել են նաև լինել խոսակցական լեզվի մաս: Հիմք ընդունելով սա՝ ադրբեջանական կողմը փորձ է կատարում ցույց տալ, որ հայերը չունեն ո՛չ մշակույթ, ո՛չ լեզու, ո՛չ գիր և ո՛չ էլ պատմություն<sup>2</sup>: Հայոց լեզվի մեջ առկա փոխառությունների իրողության մասին մանրամասն տեղեկատվություն է տալիս հայագետ Հրաչյա Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն<sup>3</sup>» աշխատության երկրորդ հատորում՝ բացատրելով թե՛ այդ փոխառությունները պատմական ինչպիսի հանգամանքների արդյունք են: Սույն գրքում Հ.Աճառյանը գրում է.

«Այս երկարժամանակյա հարաբերությունների արդյունքն է եղել թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա. ազդեցություն, որը գերազանցում է բոլոր նախկին ազդեցությունները, նրանց հետ նաև պարսկերեն ազդեցությունը, այն մեծ տարբերությամբ, որ նախորդները գրական լեզվի վրա են ազդել, իսկ սա ազդել է միայն որոշ բարբառների վրա և մուտք չի գործել գրական լեզվի մեջ<sup>4</sup>»:

Հետևություն, որ չնայած երկարատև դարերի իշխանության արդյունքում թուրքական բառերը մտել են հայերենի մեջ, այնուամենայնիվ դրանք գրա-

1 Տե՛ս Trend News Agency “Как армяне ненавидят свою нацию , или Устами знаменитых людей” <https://www.trend.az/life/interesting/1653280.html> (մուտք՝ 19.07.2019): Այս հոդվածում կարող եք նաև ծանոթանալ, թե ինչպես են փորձում նսեմացնել ոչ միայն լեզուն, այլ նաև հայ էթնոսը:

2 Տե՛ս CBC “В истории не было создателя армянского алфавита по имени Месроп Маштоц” [http://www.cbc.az/ru/v\\_story/video1516197602](http://www.cbc.az/ru/v_story/video1516197602) (մուտք՝ 19.07.2019):

սույն հոդվածում կարող եք կարդալ ադրբեջանական վարկածները հայկական գրերի և լեզվի մասին: 3 Տե՛ս Հրաչյա Աճառյան «Հայոց լեզվի պատմություն, մաս 2-րդ» ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, Երևան 1951 թ, էջ. 255-296:

4 Տե՛ս սույն գրքում, էջ 258:

կան լեզվի մաս չեն կազմել, այլ կրել են խոսակցական բնույթ, որը ժամանակին գուգահեռ անցում է կատարել դեպի այն լեզուն, որի հետ շփում է ունեցել հայերենը: Սակայն սա չի նշանակում, որ լեզուների շփման արդյունքում թուրքերենում գոյություն չունեն հայերեն փոխառյալ բառեր:

Այս տեսանկյունից հատկապես էական նշանակություն ունի պրոֆեսոր օսմանագետ Ռոբերտ Դանկոֆի «Հայերեն փոխառությունները թուրքերենում» աշխատությունը թուրքերենում հայերեն փոխառությունների վերաբերյալ<sup>1</sup>, որտեղ նա մանրամասն վերլուծության է ենթարկում թուրքերենում առկա հայերեն բառերը և դրանց կրած փոփոխությունները: Ուսումնասիրելով հեղինակի աշխատությունը՝ մենք տեսնում ենք, որ նա մանրամասն բացատրում է թուրքերենում հայերեն փոխառությունները/ մանրամասն տեղեկանալու համար այդ փոխառությունների վերաբերյալ կարող եք կարդալ վերը նշված գիրքը/ Հասկանալու համար, թե ինչ բառերի մասին է խոսքը, ստորև կբերենք մեր կողմից դուրս հանված մի քանի օրինակ.

**Օրինակ՝** ալկոս>akōs, արուռ> abur, ագուգա>aguga, ադէ>adē, ալոճ>aloç, ակն>akn, առաստաղ>arastāl, մեղու> melu, բոց>boç:

Այս տեսանկյունից նախ պետք է խոսել լեզվի պատմական զարգացման մասին: Բոլոր լեզվաբաններին հայտնի է այն անհերքելի իրողությունը, որ համակարգի գերիշխող բառապաշարից բառեր են փոխառվում մյուս լեզվի մեջ:

Այս տեսանկյունից հատկանշական օրինակ է միջնադարյան իսպաներենում առկա արաբական ծագում ունեցող 4000<sup>2</sup> բառերը, որոնք իսպաներենի մեջ են մտել արաբների կողմից իսպանացիների վրա գրեթե ութդարյա իշխանության ընթացքում<sup>3</sup>: Լեզվաբանական տեսանկյունից մի լեզվի համար սա մեծ թիվ է կազմում, սակայն սա չի նշանակում, որ արաբները կարող են հաստատել, թե իսպանացիները չունեն սեփական լեզու, և այն պարզապես արաբերենից գողացված լեզու է, մյուս կողմից, ուսումնասիրելով իսպաներենը, մենք տեսնում ենք, որ լեզվի հիմքը լատիներենն է, բայց կրկին չենք կարող ասել, որ եթե հիմքը լատիներենն է, ապա իսպաներենը՝ որպես այդպիսի մի առանձին լեզու, գոյություն չունի:

Այսպես, օրինակ՝ almohada, azucar, albañil, albaricoque բառերն ունեն արաբական ծագում, արաբերենից իսպաներենին է անցել նաև «al» նախածանցը, արաբերենի և իսպաներենի արդյունքում ծնվել է գրականության ամենահետաքրքիր էջերից մեկը, որը կոչվում է խարչա<sup>4 5</sup>:

Այն ուներ հետևյալ բնույթը. նույն ստեղծագործությունը մեկնաբանված էր միջնադարյան իսպաներենով / որոնց մեջ հաճախակի կարելի էր գտնել

1 Այս մասին մանրամասն տե՛ս Robert Dankoff “Armenian Loanwords in Turkish” Otto Harrassowitz Verlag, 1995:

2 Տե՛ս Rainer H. Goetz “La lengua española: Panorama sociohistórico”, McFarland & Company, Inc. Publishers, 2007, էջ.77:

3 Տե՛ս Ralph Penny, Ralph John Penny “A History of the Spanish Language” Cambridge University Press, 2002, էջ. 266:

4 Այս մասին մանրամասն տե՛ս “Boletín de la Real Academia de la Historia, TOMO CLXXXVIII. NUMERO I”, Madrid 1991:

5 Այս մասին մանրամասն տե՛ս Manuel Criado de Val “Los orígenes del español y los grandes textos medievales Mio Cid, Buen Amor y Celestina” CSIC, Madrid 2001:

նաև արաբերեն բառեր/ և արաբերենով: Խարչաների օրինակի վրա մենք կարող ենք հստակ տեսնել , թե ինչպես է գերիշխող համակարգը ազդում մյուսի վրա: Սա լեզվի պատմական զարգացում է , որի ժամանակ անհնար է, որ իշխող համակարգը չունենա իր ազդեցությունը իրեն ենթակա ժողովրդի վրա թե՛ տնտեսապես, թե՛ մշակութային և թե՛ հատկապես լեզվաբանական առումով: Ահա այսպիսի զարգացում է ապրել նաև հայոց լեզուն: Եթե իսպաներենում արաբական տիրապետության պատճառով տեսնում ենք արաբերենի ազդեցությունը իսպաներենի վրա<sup>1</sup>, ապա հայերենի դեպքում մենք տեսնում ենք հատկապես պարսկերենի ազդեցությունը, որի վերաբերյալ, ինչպես վերը նշեցինք, հանգամանալից պատմական ակնարկ է տալիս հայագետ Հրաչյա Աճառյանը<sup>2</sup>: Այստեղ հարկ է ավելացնել նաև Լ.Ե.Գեկյանի «Հայոց լեզվի ոճաբանություն» գրքից հատված, որտեղ, հղում կատարելով Է.Աղայանի գրքից, նշվում է.

«Ժողովուրդների փոխադարձ շփումները, նրանց քաղաքական, տնտեսական ու մշակութային հարաբերություններն առաջ են բերում լեզվական ազդեցություններ ու փոխազդեցություններ, որոնք առաջին հերթին շոշափելիորեն արտահայտվում են բառերի փոխառությամբ<sup>3</sup>»:

Սա միանգամայն իրատեսական մեկնաբանություն է լեզվում առկա փոխառությունների համար: Ուսումնասիրելով տարբեր լեզուների պատմությունները՝ մենք տեսնում ենք, որ տարբեր ժամանակներում դրանք ունեցել են փոխառություններ այլ լեզուներից, քանի որ որպես այդպիսի լեզուն մշտապես գտնվում է շփման մեջ մեկ այլ լեզվի հետ:

Հայերեն լեզվում ամենաշատ փոխառություններն ունենք պարսկերենից՝ 1410 բառ, «ստան» վերջածանցը և այլ փոխառություններ: Ահա այս փոխառությունների պատճառով էր, որ մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը հայերենը համարվել է հնդիրանյան լեզվախմբի մի մաս: Սակայն այս առումով հատկանշական է գերմանացի լեզվաբան Հ. Հյուբշմանի 1875 թվականին լույս տեսած «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում»<sup>4</sup> գիրքը, որում հեղինակն ապացուցում է, որ հայերենը՝ որպես այդպիսին, միանգամայն առանձին լեզու է և չի մտնում որևէ լեզվի ենթախմբի մեջ և համարվում է առանձին, անկախ լեզու:

Լինելով տարբեր գերտերությունների՝ պարսիկների, արաբների, հույների, բյուզանդացիների, թուրքերի, մոնղոլ-թաթարների, ռուսների թատերաբեմում՝ հայոց լեզուն այնուամենայնիվ պահպանել է իր լեզվական առանձնահատկությունները, իսկ փոխառությամբ մեկ այլ լեզվից մյուսը լեզվի

1 Տե՛ս Javier Medina López “Historia de la lengua española: Español medieval” Arco Libros, S.L, Madrid 2003 էջեր 24-27:

2 Տե՛ս Հ. Աճառյան «Հայոց լեզվի պատմություն, I մաս», Երևանի պետական համալսարան: Պետական համալսարանի հրատ., Երևան 1940 թ. էջ 218-324:

3 Տե՛ս Լ.Ե.Գեկյան «Հայոց լեզվի ոճաբանություն: Ուսումնական ձեռնարկ», Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 2006, էջ 149:

4 Տե՛ս Հ. Հյուբշման(1985)«Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում.Պատմա-բանասիրական հանդես», № 4 . pp. 27-54. ISSN 0135-0536 [http://hpi.asj-qa.am/4279/1/1985-4\(27\).pdf](http://hpi.asj-qa.am/4279/1/1985-4(27).pdf) էջեր 27-54 (մուտք՝ 19.07.2018):

գարգացման անբաժանելի մասն են կազմում: Հարկ է նշել, որ հայոց լեզուն այնքան ձկուն է ու հարուստ, որ տեղեկատվական աշխարհի շատ բառեր ունեն իրենց հայերեն տարբերակը, օրինակ՝ «internet» բառը, որը ադրբեջաներենում, թուրքերենում, արաբերենում կորեերենում, անգլերենում գերմաներենում, ֆրանսերենում, իսպաներենում, պորտուգալերենում, իտալերենում, ռուսերենում ունի նույն անունը, իսկ հայերենի ձկնությունը թույլ է տվել դրա համար ստեղծել իր տարբերակը, այն է՝ համացանց բառը, այդպիսի մեկ այլ օրինակ է նաև «television» բառը, որը շատ լեզուների մեջ մտել է այդ բառի տարբեր ադապտացված տարբերակներով, մինչդեռ հայոց լեզուն նորից ունի իր սեփական տարբերակը՝ «հեռուստատեսություն»: Եթե ուսումնասիրենք թուրքերեն կամ ադրբեջաներեն բառաֆոնդը, կտեսնենք, որ փոխառություններ կան պարսկերենից, լատիներենից, հունարենից և հատկապես՝ արաբերենից: Սրանից հետևություն, որ հիմնվելով նմանատիպ փոխառությունների վրա՝ չի կարելի ասել, որ տվյալ լեզուն գողացված է կամ ինչ-որ լեզվի հիման վրա կազմված լեզու է, քանի որ եթե այդպես լիներ, ապա հայերենը չէր համարվի առանձին անկախ լեզու, այլ կհամարվեր որևէ լեզվի ենթաձյուղ, ինչպես օրինակ՝ ադրբեջաներենը:

Իսկ ինչ լեզու է ադրբեջաներենը և ինչ գրից է օգտվում: Անհրաժեշտ է նաև հասկանալ ադրբեջաներենի դերը՝ որպես թուրքական լեզվի:

1918 թվականի Ադրբեջանի՝ այդ անվան ներքո պատմության մեջ առաջին անգամ ձևավորված պետականությունից հետո երկար ժամանակ երկիրը չի ունեցել մեկ ընդհանուր լեզու: Հաշվի առնելով Ադրբեջանի տարածքում ապրող թալիշներին, լեզգիներին և երկրի ներսում գոյություն ունեցող այլ լեզուների՝ դժվար է եղել ունենալ մեկ ընդհանրական լեզու: Ադրբեջաներենը թուրքական լեզու է, իսկ ավելի հստակ թուրքական լեզվի օղուգական ենթախմբին է պատկանում: Դա հաստատելու համար մենք կներկայացնենք հղումներ արտասահմանցի հեղինակների կողմից, որպեսզի ունենանք անկողմնակալ մեկնաբանություն ադրբեջաներենի վերաբերյալ: Ջեյմս Մինահանը իր գրքում նշում է.

[... The Azeri language spoken in a number of dialects, forms part of the Oghuz branch of Turkic languages and can be understood by speakers of other Turkic languages!...]

«Ադրբեջաներենը, որն ունի մի շարք բարբառներ, թուրքական լեզուների օղուգական խմբին է պատկանում և հասկանալի է թուրքախոս այլ մարդկանց կողմից»:

Ադրբեջաներենում կամ ինչպես շատ ավելի հաճախ անվանում են ադրբեջանական թուրքերենում մեծ է եղել արաբական, պարսկական և կովկասյան ժողովուրդների լեզուների ազդեցությունը: Այսպես, հղում կատարելով Լ.Գրենտրիի «Լեզվական քաղաքականությունը Սովետական Միությունում» գիրքը, մեջբերում ենք ադրբեջանական գրերի հետ կապված հետևյալ հատվածը.

[...Azerbaijani was written in Arabic script until 1929, when the writing

1 Տե՛ս James B. Minahan ‘ Ethnic Groups of North, East, and Central Asia: An Encyclopedia’, ABC-CLIO, LLC, Santa Barbara, California, 2014, էջ.16:

system was changed to a Latin-based script. In accordance with writting reforms, going on throughout the USSR, this was changed to Cyrillic in 1939. Since independance, Azerbaijani has again reverted to a Latin script”<sup>1</sup>...

«Ադրբեջաներենը կիրառել է արաբական գրերը մինչև 1929 թվականը, որից հետո գրի համակարգը փոխվեց լատինական գրի: Ըստ ԽՍՀՄ-ում տեղի ունեցող գրի փոփոխությունների՝ այն փոխվեց կիրիլյան գրի 1939 թվականին: Անկախությունից սկսած՝ Ադրբեջանը նորից վերադարձավ լատինական գրին»:

Հղում կատարելով մեկ այլ հեղինակի աշխատություն՝ մասնավորապես Ռոլանդ Սանիի «Հայաստան, Ադրբեջան և Վրաստան» գրքի, մենք տեսնում ենք նույն պատկերը: Այսպես՝ գրքում հեղինակը նշում է .

[... In Soviet era, literacy and average education levels rose dramatically from their very low starting point, despite two changes in standard alphabet from Arabic to Roman in the 1920s and from Roman to Cyrillic 1930s (see Language, this chapter)<sup>2</sup>...]

«Սովետական շրջանում գրագիտությունը և միջնակարգ կրթության մակարդակները կտրուկ կերպով բարձրացել են իրենց ցածր սկզբնակետից, չնայած երկու հիմնական փոփոխություններին՝ արաբերենից լատիներենի 1920-ականներին և լատիներենից կիրիլյան այբուբենի 1930-ականներին»:

Ուսումնասիրելով Էրիկ Ժան Զուրչերի «Թուրքիա. Ժամանակակից պատմություն» գիրքը՝ մենք տեսնում ենք, որ 1928 թվականին Մուսաֆա Քեմալ Աթաթուրքի բարեփոխումների նպատակներից մեկն էլ եղել է արաբական, պարսկական գրերի տեղափումը լատինական այբուբենի մեջ, ինչպես նաև թուրքերենում առկա արաբերեն և պարսկերեն բառերի փոխարինում թուրքական նոր բառերով, որի մասին օրենքը ընդունվել է 1928 թվականի նոյեմբերի մեկին, իսկ 1929 թվականի հունվարի մեկին մտել ուժի մեջ:

Այս նկատառումով հարկ է մեջբերել հատված գրքից հասկանալու համար, թե լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, ինչպիսի փոփոխությունների է ենթակա և ինչու:

[Perhaps the most drastic measure was the adoption of the Latin Alphabet in 1928. Ottoman Turkish was written with a version of Arabic/Persian alphabet. While this suited Arabic and Persian vocabulary, which made up three-quarters of written late Ottoman, it was highly unsuitable for expressing the sounds of the Turkish part of the vocabulary, Arabic being rich in consonants but very poor in vowels while Turkish is exactly the opposite<sup>3</sup>.]

«1928 թվականին լատինական այբուբենի ընդունումը հավանաբար ամենակտրուկ միջոցառումն էր: Օսմանյան թուրքերենն օգտագործում էր արաբական/պարսկական այբուբենը: Չնայած սա համապատասխանում էր արաբերեն և պարսկերեն բառապաշարին, որը կազմում էր ուշ օսմանյան թուրքերենի գրավոր բառապաշարի երեք-չորրորդ մասը, այնուամենայնիվ

1 Տե՛ս L.A. Grenoble “Language Policy in the Soviet Union”, Kluwer Academic Publishers, Dordrecht, 2003, էջ. 111:

2 Տե՛ս Ronald G. Suny “Armenia, Azerbaijan, and Georgia” DIANE Publishing, 1996, էջ.111:

3 Տե՛ս Erik Jan Zürcher “Turkey: A modern history” I.B.Tauris, 2004 , էջ.188:

այն բոլորովին նպատակահարմար չէր թուրքական հատվածի բառապաշարի արտահայտման համար, քանի որ արաբերենը բաղաձայններով հարուստ լեզու է, սակայն աղքատ է ձայնավորներից, մինչդեռ թուրքերենում միանգամայն հակառակն է»:

Չնայած հակասություններ կային այբուբենի/ պարսկերենից լատիներեն տեղափոխելու գաղափարին, այնուամենայնիվ 1928 թվականին կատարեցին այդ փոփոխությունը, և այն հավանության էր արժանացել թուրքական այլ պետությունների կողմից, որոնց մեջ էր մտնում Ադրբեջանը, որն իր կազմավորման 10-րդ տարում կրեց այն նույն փոփոխությունները, ինչը թուրքերենը:

Այստեղ մենք անցում կատարեցինք թուրքերենին հատուկ նպատակով, քանի որ ինչպես նշեցինք, ադրբեջաներենը թուրքական լեզվի օղուզական ճյուղին է պատկանում, հետևաբար այն փոփոխությունները, որը կրել է թուրքերենը, արմատավորվել է նաև ադրբեջաներենում: Թուրքերենն ունեցել է արաբերեն և պարսկերեն մեծաքանակ փոխառություններ, և լեզվի պատմության զարգացման ընթացքում այդ բառերը հեռացել են օսմանական գրերից, այսինքն՝ գրավոր և բանավոր լեզվում սկսել են ի հայտ գալ նշանակալից տարբերություններ, որը հիմք է հանդիսացել լեզուն մաքրելու այն փոխառություններից, որոնք այլևս պիտանելի չեն լեզվի կիրառման ժամանակակից փուլում: Այս փոխառությունները կիրառվել են նաև ադրբեջաներենում, և այն բարեփոխումները, որը կրել է ժամանակակից թուրքերենը, տարածվել է նաև ադրբեջաներենի վրա: Հարկ է նշել, որ չնայած այդ փոփոխություններին՝ հնարավոր չի եղել արմատապես դուրս թողնել այդ բառերը թուրքերեն լեզվից, քանի որ անհնար է եղել անտեսել այն փոխառությունները, որոնք կազմում են առօրյա խոսակցական լեզվի մաս և մշտական կիրառման մեջ են գտնվում: Անհրաժեշտ է նաև նշել, որ եթե մենք նմանապես հետևենք ադրբեջանական կողմի տրամաբանությանը, ապա կարելի է հաստատել, որ թուրքերեն լեզու որպես այդպիսին գոյություն չունի, այլ այն մի լեզու է, որը հիմնված է արաբերենի և պարսկերենի վրա, սակայն դա կնշանակի սիրողական և ոչ պրոֆեսիոնալ սուբյեկտիվ կարծիք, քանի որ ուսումնասիրելով թուրքերենը՝ մենք տեսնում ենք, որ այն առանձին լեզու է՝ իր ենթաձյուղերով հանդերձ, իսկ հայերենն ընդհանրապես անկախ լեզու է հնդեվրոպական լեզուների համակարգում, այսինքն՝ գիտականորեն միանգամայն անհերքելի է դառնում այն փաստը, որ հայոց լեզուն առանձին լեզու է՝ իր առանձին այբուբենով:

Եթե համեմատում ենք հայերենի ու ադրբեջաներենի այբուբենները, ապա պետք է նշել, որ ադրբեջանի այբուբենի հիմքը լատինական այբուբենն է: Ստացվում է, որ ադրբեջանցիները չունեն իրենց կողմից հնարված այբուբեն, ինչպես օրինակ հայերը, վրացիները, հույները կամ հրեաները: Մյուս կողմից՝ սա չի նշանակում, որ եթե ադրբեջաներենի այբուբենը լատիներենի հիմքի վրա ստեղծված այբուբեն է, կամ որ ադրբեջաներենը առանձին լեզու չէ, ինչպես հայերենը և, որ թուրքական լեզվի ընդամենը մի ձյուղ է միայն, որ պետք է հերքել այդ լեզվի ու այդ այբուբենի իրողությունը տվյալ հասարակության մեջ և աշխարհի լեզուների շարքում, ինչպես, որ դա անում

են Ադրբեջանում: Այնուամենայնիվ, գուցե սա է պատճառը, որ նախանձախնդիր ադրբեջանցիները անպայման ցանկանում են հաստատել, որ հայերը նույնպես չունեն սեփական այբուբեն: Բավականին լուրջ տեղեկատվական հակամարտություն է սկսվել հայերի և ադրբեջանցիների միջև՝ հայերեն գրությունների հետ կապված: Մասնավորապես վերցնելով եթովպական գրերը՝ ադրբեջանցիները փորձում են ցույց տալ, որ հայերը պարզապես զողացել են այս լեզվի այբուբենը, մինչդեռ ադրբեջանցիները չեն դիտարկել այն կարևորագույն հանգամանքը, որ արտաքին մի քանի նմանությունը չի կարող պատճառ հանդիսանալ նման վարկածի համար: Անհրաժեշտ է, որ երկու լեզուների հնչարտասանական համակարգը նույնպես համընկնի, այսինքն նույն տառը պետք է ունենա նույն արտասանական ու հնչյունական համակարգը նաև մյուս լեզվում, ինչպես օրինակ լատիներեն այբուբենի հիմքի վրա կառուցված այբուբեններն են, իսկ ահա եթովպերենի ու հայերենի հնչարտասանական համակարգերը չեն համընկնում իրար: Այս մասին կան բազմաթիվ հոդվածներ ադրբեջանական կայքերում, որոնցից մեկը Azglobus հոդվածն է հայերենի և եթովպերենի նմանության վերաբերյալ:

Ներկայացնում ենք հատված հոդվածից՝

**Պարոն Հագոս, երբ իմացաք, որ հայերը յուրացրել են եթովպական այբուբենը:**

– Այդ մասին առաջին անգամ իմացա 2010 թվականին, երբ այցելեցի Թուրքիա: Ես ուղևորվել էի այնտեղ՝ անցկացնելու իմ հանգիստը և մինևույն ժամանակ ծանոթանալու այդ հիասքանչ, հին և առեղծվածային երկրի տեսարժան վայրերին: Երիտասարդ հասակից ինձ հետաքրքրել է այն երկրների պատմությունը, որոնք գոյություն են ունեցել Փոքր Ասիայում: Կարդացել եմ շատ գրքեր Տրոյայի, Սպարտայի, Բյուզանդիայի, Սելջուկյան սուլթանատի մասին և վերջապես ամենաուժեղ կայսրություններից մեկի, ես կասեի մարդկության մեջ ամենաուժեղ կայսրության՝ Օսմանյան կայսրության մասին: Այդ կայսրությունը և թուրք ժողովուրդը մեծ ներդրում են ունեցել համաշխարհային պատմության մեջ՝ փոխելով նրա իրադարձությունների ընթացքը: Կոնստանդնուպոլիսի գրավումը, հզոր պայքարը և Սուլթան Մեհմեդի հանձարեղ ռազմական պլանը: Մի խոսքով ես հիացած եմ այս երկրով:

– **Իսկ ինչպե՞ս իմացաք «հայկական հարցի» մասին:**

1 Տե՛ս AzGlobus «Эфиопский историк: “Я был в шоке когда узнал, что армяне присвоили наш алфавит» <https://azglobus.wordpress.com/2016/09/22/%D1%8D%D1%84%D0%B8%D0%BE%D0%BF%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9-%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D0%BA-%D0%B2-%D0%B1%D1%8B%D0%BB-%D0%B2-%D1%88%D0%BE%D0%BA%D0%B5-%D0%BA%D0%BE%D0%B3%D0%B4%D0%B0/> (մուտք՝ 18.07.2018): նույն կայքում կան ևս երկու նմանատիպ հոդվածներ նույն զիտնականի հետ, որոնք դուր կարող եք կարդալ մանրամասն անցնելով հետևյալ հղումներով՝ Տե՛ս AzGlobus «Эфиопский историк: «Можно сбить животный аппетит армян и заставить их извиниться перед всем миром» <https://azglobus.wordpress.com/2017/06/02/%D1%8D%D1%84%D0%B8%D0%BE%D0%BF%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9-%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D0%BA-%D0%BC%D0%BE%D0%B6%D0%BD%D0%BE-%D1%81%D0%B1%D0%B8%D1%82%D1%8C-%D0%B6%D0%B8%D0%B2%D0%BE%D1%82/> ( մուտք՝ 18.07.2018), Տե՛ս AzGlobus «Эфиопский историк : «Нахождение античной Харлы ещё раз доказывает фальшивость армянской истории» <https://azglobus.wordpress.com/2017/06/18/%D1%8D%D1%84%D0%B8%D0%BE%D0%BF%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9-%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D0%BA-%D0%BD%D0%B0%D1%85%D0%BE%D0%B6%D0%B4%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D0%B0%D0%BD%D1%82%D0%B8%D1%87/> (մուտք՝ 18.07.2018):



- Ադիս-Աբեբայում, համալսարանի իմ ընկերոջից, ով սովորում էր պատմություն, Ստամբուլում մենք այցելեցինք բոլոր թանգարանները՝ Թուփկապիից մինչև ամենաժամանակակից ռազմական թանգարանը: Եղել են Ստամբուլի բոլոր գրադարաններում: Ստամբուլի համալսարանի գրադարանում ես հանդիպեցի մի գրքի, որտեղ մանրամասն նկարագրված էր 1915 թվականի իրադարձությունները: Օսմանյան կայսրության անկումը, Թուրքիայի ներսում կատարվող իրադարձությունները և այս մեծ կայսրության շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների ժամանակ այն շրջապատված էր շատ թշնամիներով: Հենց այդ գիրքն էր, որ ինձ բերեց արխիվներ: Ուսումնասիրեցի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ամբողջ գրականությունը անգլերեն լեզվով: Հետո համացանցում փնտրեցի այլընտրանքային տեղեկություն և հանդիպեցի մեծ պաշարների, որոնք պատկանում էին հայերին: Մի խոսքով, ես քիչ ժամանակ չվատնեցի այս գործի ուսումնասիրության համար: Ծանոթացա բոլոր փաստաթղթերին, հայկական գրականությանը կամ այլ կերպ ասած «հայոց ցեղասպանությանը»: Թուրքիայից վերադառնալուց հետո ես շարունակեցի որոշ փաստաթղթերի հետազոտումը, որոնց կրկնօրինակները հանել էի Ստամբուլի արխիվի ղեկավարության թույլտվությամբ: Ինձ ապշեցրեց այն փաստը, թե ինչ վարպետությամբ, անամոթությամբ, ցինիզմով և անխղճորեն հայերը կեղծել էին պատմական փաստերը: Ես ուղղակի ապշած էի, երբ առաջին անգամ ձեռքս վերցրի հայերեն պատահական մի գիրք՝ գրված հայերեն լեզվով: Ես սկզբից մտածեցի, որ եթովպերեն է, որովհետև այդ տառերը մեր հին այբուբենից էին: Ես շփոթված սկսեցի թերթել գիրքը. ինձ անհասկանալի լեզուն աստիճանաբար աչքերիս առաջ կենդանացավ՝ աշխարհում ամենահին այբուբենի նմուշները: Դա մեր տառերի կրկնօրինակն էր, որով մեր նախնիները գրում էին հազարավոր տարիներ առաջ: Ես քիչ էր մնում զարմանքից բացականչեի և ցույց տվեցի այդ տառերը իմ ընկերոջը, որ Ադիս-Աբեբայի համալսարանի պատմաբան է: Նա ժպտաց և ասաց ինձ. «Միթե դու չգիտես»՝ մինչ մենք դադարեցինք գրել մեր տառերով, հայերն ամբողջ աշխարհին հրամցրին այն որպես հայկական այբուբեն: Ես մի քանի դասախոսություն համալսարանում նվիրել են այս թեմային: Համաշխարհային գիտությունը գիտի, որ դա եթովպական այբուբենն է, իսկ ահա հայերը քարոզում են ամբողջ աշխարհին այն որպես իրենցը»:

Բնականաբար գիտնականն այդ մասին կարող էր լսել միայն Թուրքիայում կամ Ադրբեջանում, այսինքն այն երկրներում, որտեղ ամեն հնարավոր կերպ փորձում են աղավաղել հայոց պատմությունն ու լեզուն: Հողվածում մենք տեսնում ենք, որ գիտնականը փորձում է ցույց տալ այն փաստը, որ համընկնում է ադրբեջանական վարկածի հետ, նաև փորձում է նսեմացնել հայ ժողովրդին:

Նմանատիպ մեկ այլ տեղեկատվություն է ադրբեջանական Haqqin.az կայքի սույն հոդվածը<sup>1</sup>, որտեղ նույնպես ամեն կերպ փորձ է կատարվում հայերեն և եթովպերեն այբուբենների արտաքին մի քանի նմանությունների

1 Տե՛ս Haqqin.az «He армянский алфавит, а эфиопский (молва о воришке –Месропе)» <https://haqqin.az/news/34316> (մուտք՝ 19.07.2018):

հիման վրա ապացուցել, որ հայերը գիր չունեցող ազգ են, և որ այն ամենը, ինչ ունեն հայերը, վերցել են ուրիշ ազգերի այբուբեններից:

Նույն պնդումը մենք տեսնում ենք նաև wikipedia-ի ադրբեջանական տարբերակի պաշտոնական էջում.

[.....Erməni əlifbası – Erməni dilinin yazılması üçün istifadə edilən əlifba. 38 hərfdən ibarətdir. Mesrop Maştos tərəfindən yaradılmışdır. V əsrə qədər ermənilər tərəfindən yunan, suriya və aramey yazısından istifadə olunmuşdur. Müasir ermənilərin istifadə etdikləri indiki əlifba efiofiya yazısının tam oxşarıdır. Belə nəticəyə gəlmək mümkündür ki, Mesrop Maştos məhz erməni əlifbasını ixtira etməmiş (yuxusunda görməmiş), efiofiya (həbəş) yazısı əsasında yaratmışdır. Təxmin edilə bilər ki, erməni əlifbası həbəş mədəniyyətinin təsirinin nəticəsində formalaşmışdı. Erməni əlifbasının yaranması haqqında ikinci mübahisə doğuran nəzəriyyəyə əsasən əlifba V əsrdə suriyalı din xadimi Danil tərəfindən hazırlanmışdır. Digər bir fərziyyəyə əsasən əlifbaya daxil edilmiş hərlər zərdüşt yazılarından götürülmüşdür. Həqiqət ondan ibarətdir ki, erməni əlifbasındakı hərlər yunan, latın, suriya, koptik və həbəş yazılarında işarələrdən götürülmüşdür!...]

«Հայոց այբուբեն – այբուբենը կիրառվում է հայոց լեզուն գրելու համար, բաղկացած է 38 տառից: Ստեղծվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից: Մինչև հինգերորդ դարը հայերը օգտագործել են հունական, սիրիական և արամեական գրերը: Ժամանակակից հայերի կողմից կիրառվող այբուբենը նման է եթովպական նշանագրերին: Կարելի է եզրակացնել, որ Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է այբուբենը / որն իհարկե չի տեսել երագում/ եթովպական այբուբենի հիման վրա: Ենթադրվում է, որ հայոց այբուբենը ձևավորվել է հեթանոսական մշակույթի ազդեցության ներքո: Ըստ հայոց այբուբենի ստեղծման երկրորդ տեսության՝ այն ստեղծվել է կրոնական առաջնորդ Դանիելի կողմից հինգերորդ դարում: Ըստ մեկ այլ տեսության՝ տառերը վերցվել են գրադաշտական գրվածքներից: Ճշմարտությունն այն է, որ հայերեն տառերը վերցվել են հունական, լատինական, եթովպական, դպտիական և պաշտոնական սուրբ գրություններից»:

Նախ՝ հայերեն այբուբենն ի սկզբանե ունեցել է 36 տառ, իսկ և, օ, ֆ տառերի ավելացումից հետո՝ 39 տառ: Իսկ ինչ վերաբերում է դանիելյան գրերին, ապա այստեղ պետք է փաստել Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքի այն հատվածը, որտեղ Կորյունը գրում է դանիելյան գրերի մասին և հստակորեն ցույց տալիս, ոչ չնայած գոյություն են ունեցել նշանագրեր հայերեն լեզվի համար, այնուամենայիվ այն չի կիրառվել: Ահա թե ինչ է ասում Կորյունը «Վարք Մաշտոցի» գրքում.

«Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի Դանիել անունով ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գրել էր հայերեն լեզվի ավարբետներ-նշանագրեր: Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գրածի մասին, արքային հոժարեցին, որ հոգ տանի այդ պիտույքի համար: Նա էլ Վահ-

1 Տե՛ս Wikipedia.az ‘Erməni əlifbası’ [https://az.wikipedia.org/wiki/Erm%C9%99ni\\_%C9%99lifbas%C4%B1#sitat\\_geyd-4](https://az.wikipedia.org/wiki/Erm%C9%99ni_%C9%99lifbas%C4%B1#sitat_geyd-4) (ունիք՝ 21.08.2018):

րիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր: Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքային՝ Հայոց երկիրը: Նրա թագավորության հինգերորդ տարում հասցրեց նրան /նշանագրերը/, իսկ արքան սուրբ Սահակի և Մաշտոցի հետ միասին, նշանագրերն ստանալով Հաբելից, ուրախացավ: Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայոց լեզվի սիղոբաները – կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, – մանավանդ, որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից քաղված և հարություն առած հանդիպեցին, – ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան<sup>1</sup>»:

Այս հատվածը մեզ տալիս է մի քանի հարցերի պատասխան և ամենահիմնավոր հակափաստարկն է ադրբեջանական այն պնդումների, որ հայոց գրերը վերցված են ուրիշ գրերից, քանի որ Կորյունը հստակ նշում է, որ տեսնելով այդ տառերի՝ հայերեն արտասանության հետ անհամապատասխանությունները և ինչպես նաև հասկանալով, որ դրանք տարբեր դպրություններից քաղված նշանագրեր են՝ հայոց արքա Վռամշապուհը, Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը նախաձեռնում են նոր փնտրություններ, փորձում ստեղծել մի այնպիսի այբուբեն, որը չէր լինի քաղվածք տարատեսակ դպրություններից: Սրանք փաստեր են, որն ադրբեջանական կողմը պարզապես չի կարող հաշվի չառնել, անգամ եթե խոսում է դանիելյան նշանագրերի մասին, հպանցիկ կերպով շրջանցում է գրքի կարևորագույն այս հատվածի լուսաբանումը: Չնայած որ Կորյունը մեծ տեղեկություն չի տալիս տառերի ստեղծման գործընթացի վերաբերյալ, այնուամենայնիվ նա նկարագրում է, որ այդ տառերը ստեղծելու համար Մաշտոցն անցել է շատ նեղությունների միջով, մինչև որ կարողացել է ստեղծել տառերը, համակարգել դրանք: Դրա վերաբերյալ Կորյունը գրում է.

«Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծու կողմից իսկապես պարգևվեց նրան /այդ/ բախտը. Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր ու սքանչելի ծնունդներ–հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այստեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով – կապերով<sup>2</sup>»:

Ավելի պատկերավոր հասկանալու համար տարբերությունները ստորև կներկայացնենք մեկական նախադասություն յուրաքանչյուր լեզվով:

1 Տե՛ս Կորյուն «Վարք Մեսրոպ Մաշտոցի», Երևան «Հայաստան», 1994, էջ. 41:

2 Տե՛ս նույն գրքում, էջ 42:



կանչական է նաև հայերի առանձնահատուկ վերաբերմունք դեպի սեփական տառերը, այն ստեղծողը՝ Մեսրոպ Մաշտոցը, որը դասվել է սրբերի շարքը, իսկ միջնադարում ստեղծվեց հայ մշակույթի գոհարներից մեկը՝ հայկական թռչնագրերը, այսինքն՝ թռչունների տեսքով տառերի պատկերումը: Մովսես Խորենացին իր «Հայոց Պատմություն» գրքում նկարագրում է, թե ինչ ոգևորությամբ են հայերը դիմավորում Մաշտոցին հայոց այբուբեն ստեղծելու համար:

Եվ վերջապես՝ եթե դրանք պարզապես գողացված կամ յուրացրած տառեր են, ապա ինչու է Մեսրոպ Մաշտոցը տարիներ վատնել այդ ամենի վրա, եթե կարող էր պարզապես վերցնել այդ այբուբենն ու ներկայացնել ժողովրդին: Նախքան գրերի գյուտը մենք տեսնում ենք, որ Մաշտոցը լինում է տարբեր վայրերում և սովորելով անընդհատ կատարելագործվում, ծանոթանում և միայն հետո ստեղծում սեփական ժողովրդի այբուբենը, որն այդ տարիներին օդ ու ջրի նման պետք է եղել հայերին քրիստոնեության պահպանման և ժողովրդի լուսավորության համար: Որպեսզի աղբրեջանցիները կարողանան ցույց տալ, թե այդ տառերը վերցված են, թե ոչ, նախ պետք է կարողանան ամբողջապես ապացուցել, որ նախքան գրերի գյուտը գոյություն չեն ունեցել նախամաշտոցյան հայկական գրեր, քանի որ հայերենը, լինելով շատ ավելի հին լեզու, քան գրերն են, հավանականությունը շատ մեծ է, որ պատմական Հայաստանի ներսում հայերի կողմից ձևավորվել էին որոշակի տառեր կամ նշաններ: Աշխարհի գրային համակարգի վերաբերյալ ակնառու գործերից է նաև անկախ հետազոտող Փիթեր Դանիելսի «Աշխարհի՛ գրային համակարգեր» գիրքը, որտեղ մանրամասն կարելի է ծանոթանալ այն գրային համակարգի պատմություններին, որոնք գոյություն ունեն աշխարհում: Սույն գրքում նույնպես խոսվում է հայոց լեզվի մասին:

Եվ ի վերջո՝ ինչպես հայերն ի վիճակի չէին լինի ստեղծել սեփական այբուբենը, եթե անգամ Մուստաֆա Քեմալի կողմից թուրքերեն լեզվի հետ կապված բարեփոխումները իրականացվել է ազգությամբ հայ Հակոբ Մարտայանի<sup>2</sup> / ում ավելի ուշ Մուստաֆա Քեմալը տալիս է Դիլաչար անունը մի շարք լեզուներ իմանալու համար/ կողմից, ով 1932 թվականից եղել է թուրք լեզվաբանների միության գլխավոր մասնագետը, մարդ, ով անգամ Մուստաֆա Քեմալին կնքել է Աթաթուրք անունով, մի իրողությունը, որն այսօր խնամքով թաքցվում է թուրքական հասարակության կողմից:

Պատմական զարգացումների այս ֆոնին, սակայն, թուրքերն ու աղբրեջանցիները ոչ միայն ուրանում են հայերի անվանդը իրենց զարգացման գործում / մասնավորապես Բաքվի նավթային բանակցությունները Բրիտանիայի հետ իրականացվել է հայագգի Գալուստ Գյուլբեկյանի գլխավորությամբ, որը միակ մարդն էր այն ժամանակվա Օսմանյան կայսրության մեջ, ում վստահեցին այդ լուրջ և պատասխանատու պարտավորությունը/ այլ նաև փորձում են խեղաթյուրել այն ամենը, ինչ կապված է հայերի հետ: Ցավոք, այս ամենը կրում է զուտ քաղաքական պատճառահետևանքային կապ,

1 Տե՛ս Peter T. Daniels «The world's writing systems» Oxford University Press, 1996:

2 Տե՛ս Agos «Cumhuriyet'in iyi çocuğu' Hagop Martayan ya da A. Dilacı» <http://www.agos.com.tr/tr/yazi/2527/cumhuriyetin-iyi-cocugu-hagop-martayan-ya-da-a-dilacar> մուսնք՝ 26.09.2018:

քանի որ մոտավորապես կես դար առաջ՝ ԽՍՀՄ-ի տարիներին, ադրբեջանցիները ապրում էին հայերի կողքին, և այդ ժամանակ ոչ մի մեկնաբանություն չկար ոչ հայոց լեզվի և ոչ էլ հայկական գրերի գողացված լինելու վերաբերյալ:

**Anoush Martirosyan**

*EIU, Lecturer of the Department of Foreign Languages and Literature,  
Candidate of the same chair*

## ARMENIAN LANGUAGE IN AZERBAIJANI CHARGES

During the last years Azerbaijani falsifications about Armenian language, alphabet and history became more obvious conditioned by the conflict of Artsakh (Nagorno Kharabakh). Within the framework of the article it represents the discovery of some non-reliable and fraudulent information and also their interpretation, explanation and refutation connected to the Armenian language and alphabet. Despite some historical hints, the article doesn't have any political subtext and does not have a tendency to discredit any nation's alphabet, language, culture or history.

**Key words:** historical development of language, linguistic contact, Armenian language, Armenian letters, Azerbaijani falsifications, Ethiopian letters, Armenian and Turkish loan words, Latin alphabet.

**Ануш Мартиросян**

*Преподаватель кафедры иностранных языков и литературы  
Международного университета Евразия,  
соискатель кафедры*

## АРМЯНСКИЙ ЯЗЫК В АЗЕРБАЙДЖАНСКИХ ОБВИНЕНИЯХ

В последние годы, обусловленные арцахским (карабахским) противостоянием, все больше стали очевидны азербайджанские фальсификации в связи с армянским языком, историей, письменностью. В рамках статьи представлены некоторые недостоверные и ложные толкования данных, интерпретации и объяснения азербайджанского правительства и прессы посредством отрицания армянского языка и письменности. Несмотря на некоторые исторические комментарии, в статье нет политического подтекста и тенденции дискредитировать письменность, язык, культуру или историю любого народа.

**Ключевые слова:** историческое развитие языка, языковое общение, армянский язык, армянская письменность, азербайджанские фальсификации, эфиопские буквы, заимствования турецких и армянских слов, латинский алфавит.